


1371

Գ. Ա. Ե Ք Ս Ո Ւ Դ Ր Ա Ը

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԸ
ԳԻՏԱԿԱՆ
ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՄԱՍԻՆ



ԳՈՐԾԱԳՈՎՐԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿՎԱԾԻՔՑԻՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

Մի անդամ չե, վոր հասարակադիտության առաջ ծառացել և հասարակության և պետության, դասակարգերի և կուսակցությունների զարգացման հեռանկարների հարցը։ Սոցիոլոգները, բուրժուական քաղաքագետները շատ անդամ ապարդյուն գենք են չարժել այս հարցի շուրջը տեղի ունեցող վեճերում։ Սակայն հասարակական կյանքի հեռանկարների մասին, մարդկության ապագայի մասին բուրժուական գիտության արած պրոգնոզները սխալ գուրու յեկան։

Այդ բացատրվում են նրանով, վոր գիտությունների առավել բարդ բնագավառը՝ հասարակական զարգացման որենքների ուսմունքը, իր խորախորհուրդ իմաստի մեջ թափանցելու համար պահանջում և համաշխարհային սպատմության ամբողջ փորձի աներկյուղ և մինչև վերջը հետևողական ընդհանրացում, գիտական հետազոտության այն արգելվների լիակատար հաղթահարում, վոր հարուցում են շահագործող դասակարգերի մասնավոր, շահախնդիր ինտերեսները։

Արդեն անցյալ զարի կեսին հանդես յեկավ մի կուսակցություն, վորն ընդունակ յեղավ թափանցելու հասարակական զարգացման խորագույն իմաստի մեջ, ընդունակ յեղավ հասարակության և պետության զարգացման իր հայտագործած որենքներն ի սպաս գնելու հեղափոխական պրակտիկային։ Այս կուսակցությունը վո՛չ միայն նախատեսավ գեպքերի ընթացքը, այլև, կազմակերպելով բանվոր դասակարգի պայքարն ընդգեմ կապիտալիստական ստրկության, ցանկացած արդյունքների հասավ։ Դա մարքսիզմի կուսակցությունն եր, կոմունիստների կուսակցությունը, բանվոր դասակարգի կուսակցությունը։

Այս ժամանակվանից սկսած տարի չեղավ, վոր պատմական զարգացման մարքսիստական ըմբռնման խորը ճշմարտացիության և լիակատար ճշտության նոր ապացույցներ չերեր։ Այս ապացույցներն առանձնապես ցայտուն ընտւյթ ունեն մեր ժամանակներում։

Վերցրեք, որինակ, միջազգային այժմյան իրադրությունը։



9021-87

Г. АЛЕКСАНДРОВ

МАРКСИЗМ-ЛЕНИНИЗМ О НАУЧНОМ ПРЕДВИДЕНИИ
Государственное издательство политической литературы
Ереван • 1940

Ուշադրություն դարձրեք այն անզուսալ պանիկայի, տաղնապի և տարընթացության վրա, վոր թագավորում են բուրժուական յերկրների կառավարական շրջաններում և վոր արդեն չատ անդամ լոնդոնի և Փարիզի բնակչությանը հարկադրել են խրամատներ փորել և գաղապատարաններ կառուցել:

Վո՞րեղից ե այս պանիկան, բուրժուական յերկրների տիրապետող դասակարգերի և նրանց կառավարությունների այս անվտանգությունը: Ինչո՞ւ նրանց միջից վոչ վոք չի կարող յերաշխավորել վաղվա որվան բախտը:

Այդ բացատրվում ե բուրժուական հասարակության պատմականորեն ժամանակավոր, անցողական, արդեն իսկ կենասալու ընույթով: Այդ բացատրվում ե նաև այստեղից բղասող հետևանքով, այն բանով, վոր բուրժուական սոցիոլոգները, քաղաքագետները, հասարակական գործիչները չեն կարող վոչ միայն տիրանալ և կառավարել հասարակական դեպքերը, այլև չեն կարող հետևողականորեն-դիտականորեն:

Մյուս կողմից, բուրժուական քաղաքագետների և դիմանագետների աշխարհում ծայրահեղ զարմանք է շարժում մեր յերկրի հանդատությունը և վեհությունը բուրժուական յերկրների համար այդքան անհանգիստ ու մոռայլ ժամանակներում:

Այդ ամենից առաջ բացատրվում ե բանվոր դասակարգի և լենինի-Ստալինի կուսակցության գերով, այն բանով, վոր աշխատավորներին ե միայն լրիվ չափով պատկանում պատմության վարդան որը, վոր դրա համար ել բոլչեկիյան կուսակցությունը միայն կարող ե դիտականորեն թափանցել ինչպես անցյալ դարերի իսկական իմաստի, նույնակես և ապագա զարգացման խմանութիւնը:

Այդ բացատրվում ե մեր մարքսիստական-լենինյան աշխարհայցողության, մեր կուսակցության ամբողջ ստրատեգիայի, տակտիկայի, քաղաքականության հետևողական-դիտական բնույթով: Այստեղից ել զարգացման հեռանկարը, պայքարի նպատակն ու ուղին մշտապես տեսնելու այն կարողությունը, վոր ունի լենինի-Ստալինի կուսակցությունը:

Իր «Ասցիալ-դեմոկրատական թեքման մասին մեր կուսակցության մեջ» գեկուցման մեջ ընկեր Ստալինը չգերազանցված ուժով յերեան հանեց մեր կուսակցության աշխարհայցողության կարևորագույն առանձնահատկություններից մեկը:

«Մենք չենք կարող առաջ շարժվել, չիմանալով, թե ո՞ւր պետք ե շարժվել, չիմանալով շարժման նպատակը, —ասել ե

ընկեր Ստալինը:—Մենք չենք կարող կառուցել առանց հեռանկարների, առանց հավատացած լինելու, վոր սոցիալիստական տնտեսություն կառուցել սկսելով, մենք կարող ենք այն կառուցել-ավարտել: Առանց պարզ հեռանկարների, առանց պարզ նպատակների կուսակցությունը չի կարող դեկալարել շինարարությունը: Մենք չենք կարող ապրել իերնշտայնի ուցեպառով՝ «Շարժումն ամենայն ինչ է, նպատակը՝ վոչինչ»: Մենք, ընդհակառակը, վորպես հեղափոխականներ, պետք ե մեր առաջնալարգումը, մեր պրակտիկ աշխատանքը յենթարկենք պրոլետարական շինարարության հիմնական դասակարգային նպատակին: Առանց դրան՝ կընկնենք ուղղությունիցի ճահճը անխուսափելիութեան և անպայման»¹:

Այսպես դրեց ընկեր Ստալինը մեր կուսակցության գործունեյության, մեր զարգացման այս առանձնահատկության հարցը:

Իոկ ինչո՞ւ այս միայն մեր կուսակցության առանձնահատկությունն է: Ինչո՞ւ այս առանձնահատկությամբ չի ուժոված բուրժուական վո՛չ մի պետություն, բուրժուական վո՛չ մի կուսակցություն, վո՛չ մի դասակարգ բացի պրոլետարիատից:

Այս հարցին պատասխանելու համար արժե դիմել պատմական փաստերին:

Հայտնի յե, վոր հասարակական գիտության բոլոր ներկայացուցիչների գործունեյության իմաստը, —այդ գիտության յերկուս և կես հարվար տարվա զարգացման ընթացքում, սկսած Պլատոնի այսպես կոչված «իդեալական պետությունից» մինչև իերզունի և Ծղենգլերի ունակցիոն վերջին հնարաւմները, —կայանում ե տեղի ունեցող հասարակական յերկությունների խմանութիւնը այն կամ այն կերպ թափանցելու և, թեկուզ մասմք, այդ յերկությունները ղեկավարել կարողանալու մեջ:

Բայց իրազոծվե՞լ ե արդյոք հասարակական գիտության այս խնդիրը:

Նախքան գիտական սոցիալիզմի առաջացումը վո՛չ փիլիսոփաները, վո՛չ քաղաքական գործիչները, վո՛չ ել գիտնականները չկարողացան հետևողականորեն-դիտականորեն նախատեսել հասարակական կյանքի զարգացման ընթացքը:

Յեթե վերցնելու լինեք հունական փիլիսոփա Պլատոնի ուսմունքը հասարակության «իդեալական» կառուցվածքի մասին,

¹ Сталин, Сборник «Об оппозиции», стр. 361.

քի ժամանակակից բուրժուական մեկնաբանման ռեակցիոն ներկայացուցչի դատողությունների ընթացքը:

Ժամանակակից խավարամոլների կողմից հասարակագիտության դեմ մղած այս պայքարի հիմքում քաղաքական լուրջ աստառ կա:

Յեվ իսկապես, յեթև հասարակական կյանքի մեջ չկա որինաշափություն, չկա կրկնողականություն, ապա հասարակական կյանքի ուղղությունը, պատմական պրոցեսի ընթացքը հայտազործելու, հասարակության հետագա զարգացման ուղղությունը նախատեսելու բոլոր ձգտումներն ապարդյուն են: Այստեղից պարզ է, վոր այսպիսի «գիտնականների» հայացքները գիտական կոմունիզմի թշնամիների անսքող պաշտպանությունն է, վորը նպատակ ունի վոչնչացնելու նախորդ բոլոր հասարակություններից ավելի կատարյալ, ավելի բարձր ու զարգացած հասարակական կյանքի ապագա կառուցվածքի մասին գիտական բոլոր պրոդնողները: Այս հայացքները խորի ու թշնամական են հասարական զարգացման գիտական ըմբռնմանը:

Պատմական փաստերը նկարագրելու և դրանք միմյանց հետ կապակցելու, հասարակության զարգացման թեկուղ վորոշ որինաշափություններ հայտագրծելու փորձերից սկսելով, բուրժուական հասարակագիտությունը իր զարգացումն ավարտեց հասարակական կյանքի գիտական պրոդնողի, գիտական իմացության վրուել համարավորության լիակատար բացասմաբ:

Սրանք են շահագործող դասակարգերի սոցիոլոգների ու քաղաքագետների գործունեյության վողբալի արդյունքները:

Անդամ այնպիսի նշանավոր մտածողներ, սոցիալիստ-ուստապիստներ, ինչպիսիք եյին Կամպանելլան, Ռուենը, Ֆուրյեն, Զերնիշևին և մյուսները, չկարողացան գիտականութեն թափանցել ապագայի մեջ: Նրանք բոլորը կառուցում եյին ապագա սերունդների կյանքի գեղեցիկ պլանները, բայց նրանցից վոչ մեկը դուրս չեկալ առանձին, թեև հաճախ հանձարեղ կուահուների սահմաններից: Մեծ սոցիալիստ-ուստապիստները ջերմուեն տեսչում եյին ապագա բերկրալի հասարակության գալուստը: Աշխատավորներին լուսավորելու իրենց գործունեյությամբ նրանք ձգտում եյին մոտեցնել այդ ապագան: Բայց նրանք ի վիճակի չեյին գիտականորեն ապացուցելու լավագույն ապագայի պատմականորեն անխուսափելի գալուստը, հայտագրծելու այդ ապագայի համար պայքարելու ուղիներն ու միջոցները:

Վորպես որինակ վերցնենք Զերնիշևին հոչակավոր «ի՞նչ անել» գիրքը: Այս ոոմանի մեջ մարդկային հասարակության

ապագա կառուցվածքի մասին Զերնիշևսկու յերազանքը ցայտուն մարմնացում և ստացել: Ապագա հասարակության ներկայացուցչունիքն պատմում և ուսմանի հերոսուհուն: «...Իմ աշխատանքն այժմ արագ և գնում, տարեցտարի ալելի ու ալելի արագ, բայց և այնպես զու դեռ չես մտնի իմ քրոջ այդ լիակատար թագաղորության մեջ: Գոնե զու տեսար նրան, զու գիտես ապագան: Դա լուսավոր է, դա գեղեցիկ է: Դե ասա բոլորին, թե ինչ կա ալագայում, ապագան լուսավոր է և գեղեցիկ: Սիրեցեք այն, ձգտեցեք նրան, աշխատեցեք նրա համար, մոտեցրեք այն, նրանից ներկայի մեջ փոխադրեք վորքան կարող եք. ձեր կյանքն այն չափով լուսավոր ու բարի, ուրախությամբ և վայելքով հարուստ կլինի, վորչափ ալելի դուք կկարողանաք ապագայից փոխադրել ձեր ներկա կյանքի մեջ: Զգտեցեք նրան, աշխատեցեք նրա համար, մոտեցրեք այն, փոխադրեցեք նրանից ներկայի մեջ այն ամենը, ինչ կարող եք փոխադրել»¹:

Այսպիսի իրեաներ կարելի յե գտնել վո՛չ միայն Զերնիշևսկու մոտ: Ծոլոր սոցիալիստ-ուստապիստները գրում եյին ապագա հասարակակարգի հաղթանակի մասին, նրանք բոլորն այս ապագա հասարակակարգն անվանում եյին յերջանիկ, լուսավոր, բերկրալի, ի տարբերություն նրանց ժամանակակից հասարակակարգից: Յեվ այդ ճշշտ եր: Բայց այս կուահուների գիտախուռական սկզբանական գիտական համարավորության վայրէ որպէս համարավորության հետևողական գիտական հիմնական գիտական միջնավորում չկար, չեյին մատնաճշված այն իսկան պրակտիկ միջոցները, վորոնց գործի դնելով կարելի յե հասնել այդ հիմնական նոր հասարակակարգի հարականացմանը:

Բայց յեթե սոցիալիստ-ուստապիստները չկարողացան ճիշտ հայացքներ մշակել հասարակական կյանքի նկատմամբ, ապա ել ավելի պակաս հնարավորություն ունեյին դրան հասնելու բուրժուական սոցիոլոգներն ու քաղաքագետները:

Ահա՝ թե ինչու ինչպես բուրժուական սոցիոլոգների, նույնպես և ուստապիստ-սոցիալիստների մասին կարելի յե ասել, վոր նրանց կուահուներն ու ապագա զարգացման բնույթի մեջ առանձին թափանցումները, հասարակական կյանքի ընթացքը նախատեսելու նրանց ձգտումները խիստ գիտական չեյին: Հասարակական գեպքերի ընթացքն առավել ևս չեն կարող գիտականորեն նախատեսել բուրժուական քաղաքագետները: Վորպես կանոն,

¹ Чернышевский, Что делать?, стр. 265, 1906 г.

Հասարակական յերեսույթների իրենց անալիզը. Նրանք յևնթարկում են իրենց դասակարգի անցողիկ, չահախնդիր նպատակներին: Բուրժուական դիվանագիտության և քաղաքականության մեջ հայտնի յէ, որինակ, մեկ մարդ, վորոն իր կյանքի ընթացքում շատ անդամ ե դավաճանել բուրժուական տարբեր կուսակցություններին, տասնյակ անդամ աջ և ձախ և անցել, կաշոքներ և վերցրել իր թշնամիներից և բարեկամներից, —այսպիսին եր XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին ֆրանսական ականավոր դիվանագետ Տալեյրանը: Յեթե նկատի ունենանք, վոր Տալեյրանն իր կենսական սկզբունքն եր համարում այն դրույթը, վորի համաձայն «լեզուն տրված և մարդուն իր մտքերը թաղցնելու համար», յեթե դրան ավելացնենք նաև այն, վոր նաւուուցանում եր յերիտասարդ դիվանագետներին, թե վախեցք հոգու առաջին շարժումից, վորովհետեւ այդ շարժումը սովորաբար ամենաազնիվն ե. յեթե Տալեյրանը ձգտում եր քաղաքականությունը մաքրել ամեն մի ճշմարտացիությունից, ինչ դեռ կար նրա մեջ, և բուրժովին հաշվի չեր առնում տարրական աղնվությունը, ապա միանալուն հասկանալի կլինի, թե ժամանակակից բուրժուական դիվանագիտության նոր նախատեսումները ինչ բնույթ կարող ելին ունենալ: Նա հեռատես եր, այսինքն կարողանում եր նախատեսել, թե մոտակա ժամանակիվա ընթացքում ինչպես կդաստիրվեն դիվանագիտական խաղի ինտրիկներու ու խճճումները: Բայց վո՛չ Տալեյրանը, վոչ ել բուրժուական Ֆյուս քաղաքագետները ընդունակ չելին դրանից հեռու գնալու: Դրան առաջուց են ծառայում նաև մեր ժամանակի փաստերը: Բուրժուական խոչըրագույն յերկրների մինխատր-նախաղահները բազմից փորձեր ելին անում նախատեսելու իրադարձությունները և միշտ ել ծիծաղելի դրության մեջ ելին ընկնում: Այդ կարելի յետ ասել նաև ժամանակակից մի շարք սոցիալիստական կուսակցությունների ռեակցիոն լիւերների մասին: Յեթե չիշենք, թե ինչպես եր Լենինը բնորոշում կարլ Կառլցիու «թեորիական» տարրեր անհիմն կոաչումները, յեսր նա փորձում եր նախատեսել ապագան, ապա պարզ կլինեն սոցիալական ու գնունողիքական այն պատճառները, վորոնք հնարավորություն չեն տալիս բուրժուական թեորետիկներին հետեղական-դիտական գնահատում տալ հասարակական դեպքերին:

Որինակ, Լենինը Կառլցիու «երյուրանքների մեջ մերկացնելով «քանվորներին հիմարացնող լիրերալ շաղակրատանքը», հաստատում ե, վոր Կառլցին «դիտական փոշի յեւ փչում բանվորնե-

րի աչքերին», դիտակցաբար խարում և մասսաներին, թաղջնում ե նրանցից ակնհայտ սպատմական ճշմարտությունը, ծիծաղելիության աստիճանի խեղաթյուրում ե փաստերը հոգուտ մենչեւիկայն նախապաշարմունքների: Կառլցիու «պրոգնոզների» մասին, իմպերիալիզմի կայունությունն ապացուցելու նրա ճիզերի մասին լենինը նկատել ե, թե այսքան նողկալի սուտ կարող եր ասել միայն բուրժուաղիային վաճառված անդպամը: Մի՞թե կարելի յեւ այսպիսի դիրքերից նախատեսել հասարակական դարձացման ուղղությունը: Այս հնարավորությունը բացարձակապես բացառված ե, քանի վոր գիտական նախատեսման վճռական պայմաններից մեկը այն թեորիայի ճշմարտացիությունը, կենսունակությունը, ճշմարտությունն ե, վորի տեսակետով գնահատվում են փաստերը, դեպքերը:

Նույնը կարելի յեւ ասել տարբեր կեղծ-գիտական, հակա-հեղափոխական, հակաբոլցեկիյան այն հոսանքների մասին, վորոնք պայքարել են մեր կուսակցության դեմ և ջախջախվել են մեր կուսակցության կողմից, հոսանքներ, վորոնք շատ անդամ հասարակական կյանքի այս կամ այն դեպքերը «նախատեսելու» փորձեր եյին անում: Բոլցեկիյան կուսակցության պատմությունից հայտնի յէ, վոր ամեն անդամ այս փորձերը վերջացել են այն մարդկանց լիակատար ձախողումով, վորոնք ձգտում ելին դեպքերը նախատեսել հակահեղափոխական, հակաբոլցեկիյան դիրքերից:

Հասարակական յերեսույթների ուսումնասիրման գործում բուրժուական սոցիոլոգների և քաղաքագետների ունեցած բոլոր անհաջողությունները, նրանց պրոցնողների սնանկությունը չի կարող բացարձել ինչ-վոր պատահական հանդամադներով: Դա բացարձում ե բոլոր շահագործող դասակարգերի արմատական առանձնահատկություններով, սահմանափակվածությամբ: Յեկի իսկապես, վորչափ բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցությունների նպատակներն ու ծրագրային դրույթներն արտահայտում եյին արդեն կազմակորչած բուրժուական հասարակական հարաբերությունները, կոնսերվում և արդարացնում ելին դրանց, այնչափ ել այդ կուսակցությունների գործունեյությունն անխուսափելիորեն հակասության մեջ եր մտնում այն ամենի հետ, ինչ պրոգրեսիվ ե հասարակական կյանքի մեջ, այնչափ ել այս ռեակցիոն կուսակցությունների և դասակարգերի իդեոլոգիան հարկադրված եր բոլոր միջոցներով արդարացնել կազմավորված, բայց արդեն իր գարն անցած հասարակակարգը: Այդ

պատճառով ել հասկանալի յե գառնում այն փաստը; վոր բուրժուական իդեոլոգները յերբեք չեն կարողացել ձմբարացի ու բազմակողմանի բացահայտել հասարակական կյանքի որենքների խմաստը, առավել ևս չեն կարողացել հասարակության զարդացման որենքների խմացությունն ի սպաս դնել իրենց պայքարին:

Բուրժուական գիտնականներն ամեն կերպ աղավաղել և աղավաղում են պատմական փաստերը, տենդենցիոպ կերպով են ընդհանրացնում ժողովուրդների պատմության մեջ քաղաքական գեղքերի մասին յեղած տեղեկությունները, անձիշտ պատկերացում են ստեղծում հասարակության զարդացման հեռանկարների, նրա ապագայի նկատմամբ, դեմ են դուրս գալիս գիտության և կուլտուրայի այն գործիչներին, վորոնք պայքարում են բանվոր դասակարգի գործի համար ընդդեմ տիրապետող, շահագործող դասակարգերի: Բուրժուական հասարակագիտությունն ըստ եյության դադարել և գիտություն լինելուց այն պատճառով, վոր նա խեղաթյուրված, անձիշտ և բացարում պատմական պրոցեսը:

Հասարակական կյանքի որենքների խմաստի մեջ թափանցելու և այդ որենքներին տիրանալու ուղղությամբ բուրժուական սոցիոլոգների, քաղաքագետների, ուսակցիոն գործիչների ունեցած ձգտումների առթիվ կարելի յե մտաբերել Դանթեյի «Աստվածային կատակերգությունից» այն խոսքերը, վոր գրված են դժոխքի մուտքի առաջ՝ «Հույսդ կտրիր առհալեա»:

Յեթե շահագործող դասակարգերի՝ հասարակական կյանքն ուսումնասիրող իդեոլոգներն ու քաղաքագետները չկարողացան հասարակության զարդացման նկատմամբ հետեղական-դիտական հայցը ստեղծել, ապա բնության զարդացումը հետազոտող գիտնականները մեծ հաջողություններ ձեռք բերին:

Բնության որենքները հայտագործելը և դրանք իրենց կյանքում սկասագործելը, բնության զարդացումը նախատեսելը—մարդիկ շատ ավելի վաղ սովորեցին, քան նույն այս բանին հասան հասարակության վերաբերմաբ:

Ինչո՞վ ե բացարդում բնության որենքների և հասարակական կյանքի որենքների ուսումնասիրման գործում յեղած վերոհիշյալ տարբերությունը նախկին, մինչմարդքսիստական, և ժամանակակից բուրժուական գիտության մեջ:

Այս հարցին ճիշտ, գիտական պատասխան տալու համար ուետք է դիմել բնության և մարդկային հասարակության զարդացման որենքների յուրորինակության լուսաբանմանը:

«Գերմանական իդեոլոգիա» գրվածքի մեջ Մարքսը մատնանշեց, թե ըստ եյության կա միայն մեկ գիտություն՝ պատմությունը: «Պատմությունը յերկու կողմից գիտելով, կարելի յե այն բաժանել բնության պատմություն և մարդկանց պատմության: Սակայն այս յերկու կողմերն ել անքակտելիորեն կապված են միմյանց հետ. քանի վոր գոյություն ունեն մարդիկ, բնության պատմությունը և մարդկանց պատմությունը փոխադարձարար ույայմանավորում են միմյանց»¹: Յեկ իսկապես, բնության ու հասարակության պատմությունն միասնությունն արդեն նյութական աշխարհի միասնությունից, նրանց որյեկտիվությունից և բղիումը: Յեկ այսեղ, և՛ այստեղ մենք ունենք նյութի դիակետիկական զարդացում տարբեր ձեռքերի, վորոնք զարդացման ընթացքում վորպես բնա-պատմական պրոցես են յերեան գալիս: Բնության և մարդու միասնությունն, ըստ Մարքսի, կայանում ենաւ նրանում, «վոր բնության նկատմամբ մարդկանց սահմանափակ հարաբերությունը պայմանավորում ե նրանց սահմանափակ հարաբերությունը միմյանց նկատմամբ, իսկ նրանց սահմանափակ հարաբերությունը միմյանց նկատմամբ՝ նրանց սահմանափակ հարաբերությունը բնության նկատմամբ»²: Սակայն մարդկային ու բնական պատմության առավել խորն ու գործուն միասնությունը հանդես և գալիս արդյունաբերության մեջ: Մարդկային հասարակության առաջացման ժամանակակից սկսած այս միասնությունը միշտ յերեան և յեկել արտօդրության մեջ, վորովհետև այսեղ և հենց, վոր մարդն առավել խորը կերպով և թափանցում բնության գաղտնիքների մեջ, իմանում ե նրա որենքները, փոխում ե բնությունը և ինքն իրեն:

Ինչպես հայտնի յե, արտադրության պրոցեսը կարող ե տեղի ունենալ այն պայմանով միայն, յեթե միասնության ու փոխազդության մեջ են գտնվում հասարակության արտադրողական ուժերի բոլոր տարրերը—«արտադրության գործիքները, վորոնց ոգնությամբ նյութական բարիքներ են արտադրվում, մարդիկ, վորոնք շարժման մեջ են դնում արտադրության գործիքները և իրականացնում են նյութական բարիքների արտա-

¹ Маркс, Соч., т. IV, стр. 8.

² Там же, стр. 21.

դրությունը վորոշ արտադրական փորձի և աշխատանքի ընտելության շնորհիվ, —այս բոլոր տարրերը միասին կազմում են հասարակության արտադրողական ուժերը¹: Արտադրողական ուժերի բովանդակության սոսկ մատնանշումն արգեն ցույց է տալիս, թե վորքան խորն ե մարդկանց, նրանց աշխատանքի, վորպես հասարակական կյանքի կարևորագույն կողմի, փոխադրեցությունը աշխատանքի գործիքների հետ, այլ և բնական այն նյութի հետ, վոր փոխվում ե այդ գործիքների ողնությամբ: Այս միասնությունը Մարքսից առաջ հայտագործված, վորպէս նրանից առաջ վոչ վոք չկարողացավ պատմության հետևողական մատերիալիստական ըմբռնում ստեղծել: Վերջապես մարդն ինքն ել վո՞չ միայն ողտագործում ե բնության որենքները, այլև յենթարկվում ե նրանց: Դրա համար ել անհեթեթություն կլինի պատմության այս յերկու կողմերը խզելը, գրանք որյեկտիվորեն տրված են միասնության մեջ: Հասարակական կյանքի պատմաբաններից և բնագետներից վոմանք բնությունը հակադրում են մարդկային հասարակությանն այն հիման վրա, թե իր բնության որենքները վոչ-պատմական բնույթ են կրում, նրանք համեստենական ու անփոփոխ են, մինչդեռ հասարակությունը փոխվում է: Այս կարծիքը նույնպես քննադատության չի դիմանում, քանի վոր մարդը միշտ իր առջեն ունի պատմական բնությունը և բնական պատմությունը:

Բնության որենքները խիստ պատմական բնույթ են կրում: Նյութի պինդ, հեղուկ և գաղանման վիճակներն իրենց փոփոխության հատուկ որենքներն ունեն: Մեր յերկիրն անցել ե այս վիճակները: Այս ժամանակաշրջաններից յուրաքանչյուրը բնուրոշ եր իր որենքներով: Պատմականությունը, հետևապես, մարդկային հասարակության որենքներին չե միայն, վոր հատուկ է:

Մարդն ինքն ել վոչ միայն հասարակական հյակ ե, այլ վորոշ իմաստով նաև բնության պրոդուկտն է: Մարքսը վերոհիշյալ իմաստով հասարակության պատմությունը բնության պատմության մեկ մասն եր անգամ համարում, իսկ բնության պատմությունը՝ մարդու լինելության պատմություն: Իսկ յերբ բնագիտությունը լիովին կընդգրկի իր առարկան, դրում եր Մարքսը, կլինի մեկ գիտություն: Յեվ վորքան ավելի ճիշտ կճանաչի մարդը բնության որենքները, հայտագործելով դրանք ակտիվ արտադրական գործունեյության ընթացքում, այնքան

ավելի կդիտակցի նա իր միասնությունը բնության հետ: Մարդու գրում եր այս մասին: «Բնության մարդկային եյությունը գոյություն ունի միայն հասարակական մարդու համար. հասարակության մեջ ե միայն բնությունը կազ հանդիսանում նրա համար մարդու հետ, նրա կեցությունը հանդիսանում մյուսի համար և մյուսինը՝ նրա համար, հասարակության մեջ ե միայն բնությունը նրա սեփական մարդկային կեցության հիմքը հանդիսանում: Հասարակության մեջ միայն նրա բնական կեցությունը նրա մարդկային կեցությունն ե, իսկ բնությունը նրա համար գառնում ե մարդ: Այսպիսով, հասարակությունը մարդու ավարտուն եյական միասնությունն ե բնության հետ...»¹:

Բայց հասարակական կյանքի ուսումնասիրման մետաֆիզիկ մոտեցման առանձնահատկություններից մեկն ել հենց այն ե, վոր սովորաբար քննության եր առնվազ գործի մեկ կողմը միայն կամ մարդկանց պատմությունը նույնացնում եյին բնության պատմության հետ, կամ ել դրանք արմատապես հակադրում եյին միայն: Միայն մարքսիզմ-լինինիզմը ավեց այս հարցի հետևողականորեն-գիտական լուծումը:

Դեռ կուղլիդ Ֆոյերբախը, Մարքսի և Ենգելսի փիլիսոփայական նախորդը, բողոքում եր բնության ու մարդկության որենքների նույնացման դեմ: Յեթե մարդը բնության մի մասն ե բնությունը մարդու միջոցով ե սկսում գիտակցել ինքն իրեն, ապա այստեղից, ինչպես արտահայտվում է Ֆոյերբախը, չի հետևում, թե տասը պատվիրանները գրված են ուույն այն ձևորով, վորը վորոտի շանթեր և ուղարկում: Սակայն Ֆոյերբախը, մետաֆիզիկ մատերիալիստ լինելով, այլ և բացի այդ իդեալիստորեն հասկանալով հասարակական զարգացումը, չեր կարող ճիշտ լուծել այս հարցը: Միայն Մարքսն ու Ենգելսը, լենինը և Ստալինը ցույց տվին, թե այն, ինչ առավել խորը կերպով և միացնում բնության և հասարակության զարգացումը, առավել խորը կերպով ել միացնում բնության և հասարակության զարգացումը, առավել խորը կերպով ել հենց տարրերում ե նրանց: Հասարակությունը պատող ու նյութական աշխարհի զարգացման վորակապիս առանձին բնագավառ դարձնող այդպիսի պարմանը արդյունաբերությունը, նրանց աշխատանքը:

Բնության որենքների համեմատությամբ հասարակության որենքների յերկրորդ առանձնահատկությունն այն ե, վոր յեթե

¹ Маркс и Энгельс, Соч., т. III, стр. 623.

բնության մեջ որդանական աշխարհի, կենդանի եյակների աշխարհի զարգացման հիմնական բովանդակությունը գոյության կորին և, ապա մարդկային պատմության հիմնական բովանդակությունը, սկսած այն ժամանակվաճից, յերբ մարդիկ զասակարգերի բաժանմեցին, դասակարգերի կորին և։ Դասակարգերի կորիվ մարդկային հասարակության պատմության հիմնական բավանդակությունն և՝ սկսած տոհմային համայնքի քայլայումից և կործանումից մինչև մեր որերը։

Յեկ վերջապես, հասարակական պրոցեսի յերրորդ եյական առանձնահատկությունը մարդկանց նպատակահարմար գործունեյությունն և՝ բնության ուժերի տարերային ու կույր խաղի համեմատությամբ։ Աշխատանքի միջոցով մարդը հայտապործում և բնության որինաչափությունը։ Արտադրական գործունեյության, աշխատանքի չորսիվ մարդը վո՞չ միայն փոխում է բնությունը, այլև միաժամանակ ճանաչում և այն։

Բոլորի համար ակներն և, թե մարդկանց կյանքի ու կովի համար ինչ չսկայական նշանակություն ունի բնության և հասարակության գարգացման որենքների իմացությունը։

Բնության գարգացման որենքները չգիտենալով, մարդը չեր կարողանա իր կյանքում ոգտագործել նրա հարստությունները, չեր կարող ճիշտ կողմնորոշվել նրա յերեւյթների մեջ, չեր կարող կազմակերպել իր աշխատանքը։ Բնության յերեւյթների, նրա որենքների իմացությունը, դեռ մարդկային պատմության արշալույսին բնության գարգացումը նախատեսել սովորելու ուղղությամբ մարդկանց ունեցած ձգտումը բացարձում և այն վճռական նշանակությամբ, վոր ունի այս իմացությունը մարդկանց գոյության համար։ Բնության յերեւյթներն իմանալուց, գրանց մեջ կողմնորոշվել, դրանք ոգտագործել կարողանալուց ևր կախված մարդու ամրող կյանքը։ Այդ մարդկանց համար կյանքի և մահվան ինդիք եր։

Դաման բնության հետ անազորույն և տեսական պայքարի մեջ հասարակական մարդը զատվեց կենդանական աշխարհից։ Բազմադարյան գործունեյության ընթացքում չնորհիվ աշխատանքի նա ստիճանաբար սովորեց հասկանալ բնության յերեւյթները, նախատեսել դրանց զարգացումը։ Հենց այս կենսականութեն վճռական հանգամանքով և բացարձում մարդու այդքան անհաղթահարելի ձգտումը դեպի բնության որենքների ալերի ու ավելի կատարյալ ու ճշգրիտ իմացությունը, բնության

դարձացման այդ խմացված որենքներն իր կյանքին, եր աշխատանքին ի սպաս զնելու ձգտումը։

Բայց չե՞ղոր հասարակական զարգացման որենքների խմացությունն ել մարդկանց համար պակաս նշանակություն չունի, սակայն այստեղ զգալի չափով ավելի պակաս արդյունքներ ձեռք բերվեցին։ Մինչև մարդսիզմի առաջացումը մարդիկ ճիշտ, հետևողականորեն գիտական պատկերացումը չունեյին մարդկային հասարակության զարգացման պատմական պրոցեսի մասին։ Այս բոլորն իրենց խորը պատճառներն ունեն։

Բնության յերեւյթների մասին տարրական տեղեկություններ ունենալու անհրաժեշտության են գեմ առնում բոլոր մարդիկ առանց բայց առության։ Մարդու գործունեյությունն անհնարին է առանց տարբա յեղանակների, ցերեկվա և դիշերմա հարցականության և այլ տեղեկությունների, գործնք մաել են նրա կենցաղի, նրա կյանքի ու գիտակցության մեջ։ Բնության մասին մարդկանց այսպիսի տարրական տեղեկությունները կատարելաբործվեցին, ճշգրտվեցին, ավելի լրիվ դարձան, արագ գրության, աշխատանքի մեջ հասարակական մարդու փորձի կուտակմանը զուգընթաց, բնության յերեւյթները մարդու կարեքների համար ոգտագործելուն զուգընթաց։

Յեկ վորքան ավելի լրիվ ու ավելի ճշգրիտ եր պատճեց բնության մասին այս իմացությունը, այնքան, իր հերթին, ավելի հաջող ելին մարդու արտադրական գործունեյության տրդունքները։ Մարդկային հասարակության հակադիր դասակարդերի բաժանմելուց հետո միայն բնության մասին մարդու գիտելիքների հետագա զարգացումն ավելի ու ավելի կենտրոնացավ ունենոր, շահագործող գատակարգերի մոտ, վորոնք իրենց մենաշնորհը զարդբին մտավոր աշխատանքը, հաճախ պարուրելով այս իմացությունը վոչ-գիտական, կրոնական ձևի մեջ։

Քիչ այլ կերպ գատավորեց վարդկային հասարակության պատմության, հասարամական զարգացման որենքների խմացության գործը։

Այլ գրություն առաջացավ այստեղ այն պատճառով, վոր իրենց հենց առաջին քայլերից սկսած ստրկատերերը, կտրվածաւերերը, զործարանատերերը, կատաղի պայքարելով հասարակական կյանքի ճշմարտացի, ճիշտ լմբանման դեմ, ազագաղում ելին պատճական յերեւյթները, լուության եյին մատնում իրենց համար անձեռնուու, իրենց քալաքական հզորաթյունը թուլացնող պատճական փաստերը, հասարակագիտությունը հարմարեց-



նում եյին իրենց մասնավոր, շահախնդիր, գիշատիչ շահերին։ Յեկալ այդ հասկանալի յէ, քանի վոր հասարակական կյանքի որենքների ճիշտ ըմբռնումը չի կարող աջակցել այն հասարակության հիմքերի ամբապնդմանը, վորը հիմնված եւ մասնավոր սեփականատիրության և շահագործման վրա, նա ցույց եւ տալիս դրա ժամանակավոր, անցողական բնույթը, ավելացնում եւ իրենց ճնշողների դեմ աշխատավորների հաղթական պայքարի շանսերը։ Յեթե դրա հետ միասին նկատի ունենանք նաև այն, վոր շահագործող դասակարգերը միայն հնարավորություն ունեցին պատմության ուսումնասիրությամբ, հասարակական զարդացման առանձնահատկությունների ուսումնասիրությամբ զբաղվելու, ապա հասկանալի կլինի, թե ինչու հասարակակիցությունը հետ եւ մնացել բնական գիտություններից։

Բայց և ամեն տեսակի սահմանափակումներից ու ամեն տեսակի միստիկայից աղատված, բնության յերևույթները բացատրելիս մեն-միայն գիտական աշխարհայեցողությամբ—գիտելեկտիկական մատերիալիզմով դեկալարվող իսկական բնադիտությունն ել շարունակում եւ զարգանալ մարդուդմ-լենինիզմի բարերար ապրեցության տակ միայն։

Թե վորքան կարենոր եւ հասարակական կյանքի համար բնության զարգացման որենքները գիտենալը, բնության զարգացումը գիտականորեն նախատեսել կարողանալը, այդ մասին վկայում են բազմաթիվ փաստեր։

Ֆրիդրիխ Յնդելսն իր «Աշխատանքի դերը կապի մարդացման պրոցեսում» կրասիկ աշխատության մեջ փայլուն կերպով ցույց տվեց, վոր բնության բնադալառում նախատեսումն ել բոլոր կողմերով գիտական ու հետեւողական կդառնա, յերբ նա կմիանա հասարակական կյանքի որենքների խմացության հետ։ Իսկ մինչ այդ մարդիկ չունեցած եւ շատ հրապուրվեն բնության վրա իրենց տարած հաղթանակներով։ Շատ հաճախ մարդկանց գործողություններն այս բնադալառում վերջանում են նրանց համար միանգամայն անսպասելի, անսախատեսելի հետեւանքներով։ Յնդելսն որինակներ եւ բերում։ Միջազետքում, Հունաստանում, Փոքր Ասիայում արմատահանմամբ վարելահող ձեռք բերելիս բոլորովին չեյին մտածում, վոր դրանով նրանք քայլայում ու անսպաս են դարձնաւ իրենց յերկրի սպայմաններում վորքան եւ փոխվում բնության իմացությունը, մարդու՝ բնության փոփոխության ուղղված գործունեյության հետեւանքների նախատեսումը։

Այսական իտալացիք կտրատում եյին յեռների հարավային լանջի փշատերեկ անտառները, նրանք նույնպես չեյին նախատեսում, վոր դա անուղղելի հարված կհասցնի իրենց անասնապահությանը, տարվան մեծ մասը ջրից կզրկվեն բոլոր լեռնային աղբյուրները։ Կոլումբոսն ել Ամերիկան գտնելիս չգիտեր, վոր իր գյուտը նորից կյանքի կուչի ստրկության ինստիտուտը։ «Յերբ Կուբայի իսպանացի սլլանտառորները, —գրում ե Ենդելսը, —հրձիգում եյին լեռնալանջերի անտառները և մոխրից ստանում պարարտանյութ, վորը կարող ե շատ յեկամտաբեր սուրճի տունկերի մեկ սերնդի համար բավական լինել, բնավ նրանց փույթը չեր, թե արևադարձային հեղեղները կը չեն անպաշտպան բուսահողերը և կթողնեն միայն լերկ քարածայուեր։ Ներկայիս արտադրայեղանակի սպայմաններում բնության, ինչպես և հասարակության նկատմամբ հաշվի յե առնվում միայն առաջին շոշափելի հաջողությունը»¹։

Դրությունն արմատապես փոխվում ե, յերբ հասարակության տեր են դառնում աշխատավորները, յերբ բնության յերեվույթներն ոգտագործվում են ամբողջ հասարակության շահերի համար։ Մարդիկ ընդունակ են դառնում հայտագործելու, նախագուշակելու բնության վրա իրենց աղղեցության վո'չ միայն մոտիկ, անմիջական, շոշափելի, այլև հեռավոր հետեւանքները։ Բայց կան և մատնանշել Ֆերդանի հովտի աշխատավորների կողմից Մեծ Ֆերդանյան ջրանցքի ստեղծումը, աշխարհիս մեջ ամենահզոր ելեկտրոկայաններ ունեցող «Մեծ Վոլգայի» շինարարությունը, խորհրդային գիտնականների՝ Միջուրինի, Պավլովի, Լիսենկոյի, Վիլյամսի, Զամամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցող կոլտնտեսականների աչքի ընկնող գյուտերը, վորպեսզի համոզվենք, թե սոցիալիստական յերկրի սպայմաններում վորքան եւ փոխվում բնության իմացությունը, մարդու՝ բնության փոփոխության ուղղված գործունեյության հետեւանքների նախատեսումը։

ԽՍՀՄ ժողովուրդների ստեղծարար գործունեյության որինակը համոզիչ կերպով ցույց եւ տալիս, վոր բնության զարդացման որենքների իսկական նախատեսումը, նախատեսում, վոր հենված լինի ամբողջ ժողովրդի փորձի և գործունեյության վրա և նրա բարիքին ուղղված լինի, —հնարավոր ե միայն այնտեղ, վորտեղ նա միանում ե հասարակության զարդացման գիտական

¹ Յնդելս, Բնության գիտեկաբիկա, Էջ 93, 1930։

ըմբռնման հետ, վորտեղ իշխում և սոցիալիստական հասարակական կարգը, վորտեղ բնության որենքներն այլևս չեն ոգտագործվում մասնավոր, շահախնդիր, գիշատիչ նպատակներով:

Մարդկանց կյանքի և պայքարի համար ընական գիտությունների վիթխարի կարելորությունը նկատի ունենալով, աշխատավորների մեծ ուսուցիչներն ու առաջնորդները՝ Մարքսը և Ենդելսը, Լենինը և Ստալինը ուսուցանում են աշխատավորներին՝ տիրապետել մարդկության կուտակած բոլոր գիտելիքներին, գիտենալ ինչպես հասարակության զարգացման որենքները, նույնպես ել բնության զարգացման որենքները, կարողանալ այդ իմացությունն ոգտագործել կոմունիստական հասարակության շինարարության մեջ:

Ի՞նչ պատճառներով և, վոր նախորդ բոլոր գիտնականների և հասարակական գործիչների համար անմատչելի յեղալ հասարակական կյանքի որենքների իմացությունը, հետեւողական-դիտական նախատեսումը: Ամենից առաջ այն պատճառով, վոր հասարակական յերեսությների հետազոտման վորոշակի աստիճանի վրա հասարակական կյանքի ընթացքը, հասարակական զարգացման տենդենցները հակասության մեջ են մտնում շահագործող գասակարգի և նրա իդեոլոգների անձուկ, սահմանափակ շահերի հետ: Հասարակական զարգացման որենքների ճիշտ ըմբռնման համար անհաջթահարելի արգելք և ստեղծվում: Այսպես, որինակ, ամբողջ պատմությունը վկայում է մասնավոր սեփականատիրության անցողական բնույթի մասին: Սակայն բուրժուական վո՛չ մի սոցիոլոգ չի կարող կանգնել պատմությունից բղխող այս հետեւթյան անվախ ու հետեւղական ապացուցման զիրքերի վրա: Պատմությունը վկայում է, վոր հասարակական մեկ ֆորմացիայից դեպի մյուսը շարժվելու ընթացքում աստիճանաբար ամելի ու ամելի ռեալ հնարավորություններ են աճում շահագործման դեմ աշխատավորների պայքարի համար: Բայց կարո՞ղ ե արդյոք թեկուղ մեկ բուրժուական սոցիոլոգ աներկյուղ կերպով և գիտական-հետեւղականորեն հանգել այս յեղակացության: Վո՛չ և գարձալ վո՛չ: Վորովհետեւ բավական ե կանոնել այս գիրքերի վրա, և բուրժուական սոցիոլոգի հետեւթյունները կակսելին տատանել, թուլացնել հենց այն բուրժուական գիտության գիրքերը, վորի ներկայացուցիչն ե նա հանդիպանում: Յեկալ ընդհակառակը, հենց այն պատճառով, վոր բան-

վոր դասակարգն ազատ և շահագործող դասակարգերին հատուկ բոլոր պատմական սահմանափակություններից, նրա վորպես դասակարգի ձևավորման հետ միասին որյեկտիվ սոցիալական պայմաններ առաջացան հասարակական յերեսությների հետեւղական-գիտական բացարձակման համար:

Յերեան հանելով բանվոր դասակարգի պատմական գերը, Մարքսը գրում եր՝ «Բանն այն է, թե ի՞նչ ե պրոլետարիատը և թե նա, իր այլ կեցության համապատասխան, պատմականորեն ի՞նչ հարկադրված կլինի անել: Նրա նպատակը և նրա պատմական գործողությունը ամենապարզ ու անվիճելի կերպով նախացուցվում են նրա սեփական կենսական դրությամբ, ինչպես և ժամանակակից բուրժուական հասարակության ամբողջ կազմակերպությամբ»¹:

Մարքսն ուսուցանում էր, վոր պրոլետարիատը համաշխարհային պատմության մեջ այն միակ դասակարգն է, վորն իր և ամբողջ հասարակության համար կապիտալիստական ստրկությունից զուրս զալու յելքը տեսնում է վոչ թե հասարակական կառուցվածքի նախկին ձևերի, այլ ապագայի մեջ, վորն իր զանակիցների հետ միասին շահագործված է, վոր վորքան կարելի յե շուտով գա այս ապագան: Նա այն միակ դասակարգն է, վորն ընդունակ է մինչև վերջ ոգտագործելու բոլոր հնարավորությունները՝ հանուն լուսավոր ապագայի, հանուն սոցիալիզմի պայքարելու համար:

Մարքսը գրում եր, վոր պրոլետարիատը հասարակության սկզբունք և զարձնում այն, ինչ հասարակությունն արգեն նրա սկզբունքն է դարձրել, այսինքն արտադրության միջոցների մասնավոր սեփականատիրության բացակայությունը: Իսկ, ինչպես հայտնի յե, հենց արտադրության միջոցների մասնավոր սեփականատերերի շահերն են, վոր վերջին հաշվով գլխավոր արգելքն եյին հանդիսանում հասարակական զարգացման որենքների գիտական իմացությանը և այդ որենքներին տիրանալուն:

Յեկալ ընորհիվ այն բանի, վոր անցյալ դարի կեսին առաջացավ, զարդացավ և ինքնուրույն պատմական ուժ դարձավ բանվոր դասակարգը, առաջացավ Մարքսի և Ենդեղծած հեղափոխական կուսակցությունը, — չնորհիվ դրա ուեալ որյեկտիվ հանդիսանությունները նախապատրաստից իսկական հասարակա-

¹ Маркс и Энгельс, Соч., т. III, стр. 56.

դիտություն ստեղծելու համար, հասարակության գարզացման որենքների իմացության համար, հասարակական կյանքի ընթացքի գիտական, ձիչտ նախատեսման համար:

Մարքսի և Ենդելսի մեծ յերախտիքն այն է, վոր նրանք բանվոր դասակարգի տեսակետից ընդհանրացրին համաշխարհային դիտության և կուլտուրայի բոլոր նվաճումները, մշակելով միակ, մինչև վերջը հետեղողական գիտական աշխարհայացք՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը։ Ընդհանրացնելով գիտության բոլոր բնագավառների գարզացման համբարձումարները, գրանք բանվոր դասակարգի հեղափոխական պայքարին ի սպաս դնելով, Մարքսն ու Ենդելսը յելնում ելին այն համարել ճեղաշ յեղրակացությունից, թե «վորքան ալելի համարձակու վճռականորեն և հանդես գալիս գիտությունը, այնքան ավելի յե նա համապատասխան դառնում բանվորների շահերին ու ձգտումներին»¹:

Մարքսի և Ենդելսի այս յերեւելի իդեան բազմակողմանիորեն գարզացրին ու հիմնավորեցին Լենինն ու Ստալինը։ Ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում տված եր գեկուցման մեջ առանձին ուժով ընդդեց այն նշանակությունը, վոր ունի հասարակական կյանքի որենքների բոլշևիկյան իմացությունը կուսակցության, խորհրդային ժողովրդի համար, կոմունիզմի հաղթանակի համար։ Այս իմացությունն ե միայն, վոր հզոր ազգեցություն ե ունենում բանվոր դասակարգի, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի այն պայքարի վրա, վոր նրանք մզում են ապագայի ել ալելի բերկրալի հասարակության համար։

Այս ամենը լրիվ չափով բացատրում է, թե ինչու միայն մարքսիստ-լենինյանը, միայն դիալեկտիկական մատերիալիստը հասարակագիտության մեջ կարող ե մարտնչող ոպտիմիստ լինել։ Մարքսիստ-լենինյանը հասարակությունը դիտում է այնպես, ինչպես նա իրոք։ Մարքսիստ-լենինյանը հիմնալի կերպով բացահայտում է հոլանդացի մտածող նենդիկտ Սպինոզայի թեավոր Փրազն այն մասին, թե վիլիսովիան պատմական ուսաւ փաստերն ուսումնասիրելիս սկսուի ե ամենից առաջ չծիծաղի, լաց չլինի, այլ հասկանա։ Բայց հենց այն պատճառով, վոր հետեղողական դիալեկտիկական մատերիալիզմը վոչ թե անհիմն Փանտագիսներ ե հորինում ապագա հասարակության մասին,

վոչ թե պարզամտորեն կուահում է նրա մասին, վոչ թե ինտուիտիվ կերպով ե թափանցում վերահաս դեպքերի իմաստի մեջ, այլ վրա վրա նայում է վորպես պատմական գարզացման որինաչափ արդյունքի, այդ պատճառով հենց նա կարող է ձիչտ կողմանորոշվել հասարակության գարզացման ինչպես ներկա բնույթի, նույնպես ել նրա գարզացման ապագա հիմնական ուղղության վերաբերմաբը, նա գիտե պրոդրեսիվ ապագայի հաղթության պատմական անխուսափելիությունը։

Նշանակալից են, որինալ, Լենինի՝ հեղափոխական պաթոսով, դիտական ոպտիմիզմով տողորդած խոսքերը, վորոնք հանձարեղ կերպով բացահայտում են հասարակական կյանքի գարզացման պատմական ուղիները Ռուսաստանում, յերբ նա վեռ 1894 թվին նախատեսում եր, թե բանվոր գասակարգը, յերկրի զեմուկրասական բոլոր տարրերի գլուխ անցնելով, կտապար ատելի արտորուտիզմը և կընթանա «բացահայտ բաղաբան կոմինիստական նկատմամբ պայմանական կոմունիստական հեղափոխությունը»¹։

Ա. Մ. Գորկին Լենինի բնավորության հիմնական գիծը մատերիալիստի մարանչող ոպտիմիզմն եր համարում։ Գիտական այս վեհ ոպտիմիզմը, վոր բոլիսում եր պատճության մատերիալիստական ըմբռնումից, բնորոշ ե մեր ամբողջ կուսակցության համար, մեր յերկրի հերոսական սովորող ժողովրդի համար։

Լենինի-Ստալինի կուսակցությունը իրազործում է հասարակական գարզացման որենքների խմացության, մեծ միացումը բանվորների, աշխատավորների կազմակերպված դասակարգային պայքարի հետ։ Մեր կուսակցության, նրա փորձի, նրա պայքարի, ժողովրդի հետ նրա ունեցած կապի ասանձնահատկություններից բղխում ե վոչ միայն գիտական նախատեսման հասրավորությունը, այլև գիտական պրոդուկտի լրիվ իրազործման ուսակ հնարավորությունը։

Պատճությունը վկայում է, վոր լուսավոր ապագայի հավատըն արագորեն խավարում եր, ոպտիմիզմն անհետանում, պրոդուկտ մաքուր մտահայեցողության ընազավառումն ելին մնում, քանի զեռ գիտական իդեաները ժողովրդի սեփականություն չեյին դարձել, քանի զեռ կոմունիստական կուսակցության պայքարի հետեւանքով գիտական այս իդեաներն իրենց գրոշների տակ չեյին համախմբել աշխատավորներին, վորոնք գիտության

¹ Լենին, Հ. I, Էջ 269, Պետքատ, 1930:

¹ Маркс и Энгельс, Соч., т. XIV, стр. 677—678.

ները, վոր բղխում են հասարակական դարձացման իմացություն-
նից:

Նու չի կտրող չհամաձայնել բանաստեղծի հետեւյալ խոսքե-
րի հետ.

Պետք ե

Խել

Ինդությունը

աղաղաղ ուրեմից:

Մեր կուսակցությունը պատմականորեն կարող ե
և ակետք և բոլորից ավելի հեռուն տեսնի: Նա տեսնում ե ավելի
խորն ու ավելի ճիշտ, նա գտնվում ե աշխատավոր մասսաների
առջևում, նրա իդեաները մարդկության ապագան են արտահայ-
տում և ներկայացնում:

թէ» պարզությունը և հեղափոխական մտահղացումների «ուշլ-իսապույտ» համարձակությունը»¹:

Բոլցեկների կուսակցության գիտական խորաթափանցությունը բացառիկ ցայտումությամբ արտահայտվում է հեղափոխության վերասալաց ժամանակաշրջաններում, հասարակական զարդացման ամենաբարդ ժամանակաշրջաններում, յերբ վերջացնում է իր կյանքը հին հասարակությունը և ծննդում են նոր, ավելի զարգացած հասարակությունը։ Կողմնորոշվել հեղափոխական գեղքերի բարդ խճողանքի մեջ, մարդկային պատմության այս հանդուցակետի մեջ, հստակառես լինել մարդկության պատմության հատկապես այս ժամանակաշրջանում, ճշորոշ տեսնել հեղափոխության ապագա զարգացման հիմնական ուղին և զիգ-զագները—զա նշանակում է լիովին բացահայտել մեր կուսակցության թեորիայի մեջ, ամենահաղթ ուժը։

Բոլցեկների կուսակցության հեղափոխական թեորիայի մեծությ այն է, վոր նա գիտականորեն բացում է հասարակական կյանքի որենքները, անսխալ տեսնում է այդ կյանքի զարդացման հիմնական ուղղությունը մարդկային պատմության անդամ ամենափոթորկության ապագա, բարդ, հանդուցային, անցման մոմենտներին։ Մեր կուսակցությունը հեղափոխական պայքարի յերկարատես ու բարդ փորձով փայլուն կերպով ապացուցեց, վոր ինքը կարողանում է բազմակողմանիորեն ու ճիշտ կողմնորոշվել ինչպես հեղափոխական վերելքի ժամանակաշրջաններում, նույնպես և այն ժամանակաշրջաններում, յերբ պահանջվում է ժամանակալորապես նահանջել, յերբ հեղափոխությունը յերբեմն պարտություն է կրել, յերբ հին հասարակության ուժերն առժամանակ հաղթող են գուրս յեկել։ Զի՞ վոր հայտնի յե, վոր առանձնապես այսպիսի մոմենտներին է հնարավոր հեշտությամբ հեռանկարը կորցնել, վհատության մեջ ընկնել, հասարակական զարդացման պրոդրեսիվ գծի հաղթանակի հայլաւը կորցնել։ Բայց հասարակական կյանքի այս ժամանակաշրջաններում էլ մեր կուսակցությունը յերբեք չի կորցրել տոկունությունը, հաղթանակի անհողողդ վստահությունը, զեպքերի մեջ հետեղական-գիտական որիենտացիան։ Մեր կուսակցության պայքարի այս առանձնահատկությունը պահպանում է իր կարողացանը և այն անվանում։ Սոցիալ-գեմոկրատները

կազմեցին պրոլետարական կուսակցություն, վորը չի վհատվի ուազմական առաջին գրոհից, չի կորցնի գլուխը, չի տարվի ավանտյուրաներով»²։

Մարքսի և Լենինի մատնանշված իդեաները՝ գարգացնելով, հարստացնելով, ընկեր Ստալինն ուսուցանում է, վոր բոլցեկների կուսակցությունը, մարդկային պատմության ամենաբարդ ժամանակներում ճիշտ կողմնորոշվելով, իր պատմական փորձով արդեն ցույց է տվել, վոր նա կարող է վո՛չ միայն ինքը ճիշտ կողմնորոշվել, այլ կողմնորոշել նաև ամբողջ ժողովրդին՝ եր յերջանկության համար նրա մղած պայքարում։ Դրա չնորհել բոլցեկների կուսակցության գործերն ու իդեաները բոլոր աշխատավորների համար, ամբողջ ժողովրդի համար մոտիկ, մատչելի և հարազատ են դառնում։ ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու փորձը ցույց տվեց, վոր յերբ բոլցեկների կուսակցությունն իր վեհ գրոշի տակ առաջ և տաճում աշխատավորներին, յերբ ձուլվում է մի անքակտելի ամբողջություն ևն կազմում կոմունիզմն ու ժողովուրդը, այն ժամանակ գալիս և հասարակական զարդացման այն մեծ արագացումը, վորի մասին մտածել անդամ չեր կարելի անցյալում։

Ծնկեր Ստալինն ուսուցանում է, վոր «նստել զեկի մոտ և նայել վոչինչ չտեսնելու համար, մինչև վոր հանգամանքները մեզ խոթեն վորեւ փորձանքի մեջ՝ զա զես չի նշանակում զեկավարել։ Բոլցեկիզմն այսպես չի հասկանում զեկավարությունը։ Հեկավարելու համար պետք է նախատեսել։ Իսկ նախատեսելը, ընկերներ, միշտ ել հեշտ չե։ Մեկ բան և, յերբ մեկ-յերկու տառյակ զեկավար ընկերներ նայում և նկատում են մեր աշխատանքի թերությունները, իսկ բանվորական մասսաները չեն ուզում կամ ել չեն կարող վոչ նայել, վոչ ել նկատել թերությունները։ Այստեղ կան բոլոր շահները, վոր անկատկած աշքից բաց կթողնես, վոչ բոլորը կնկատես։ Այլ բան և, յերբ մեկ-յերկու տառյակ զեկավար ընկերների հետ նայում և նկատում են մեր աշխատանքի թերությունները հարյուր-հազարամոր և մի-լիոնավոր բանվորներ, հայտաբերելով մեր սիսալները, լծվելով շինարարության ընդհանուր գործին և նշելով դործի բարելավ-ման ուղիները»²։

¹ Ленин, т. XII, стр. 126.

² Сталин, О работах апрельского об'единенного пленума ЦК и ЦКК ВКП(б), стр. 12—13, Гиз, 1928 г.

Հայտնի յէ ընկեր Ստալինի և մեր կուսակցության անդադրում հոգսն այն մասին, վոր կոմունիզմի կառուցման ընդհանուր դործին լծվեն բոլոր աշխատավորները, վոր խորհրդային ամբողջ հասարակայնությունը հասկանա և ուղի նշի մեր դործը բարելավելու համար, ե՛լ ավելի արագ հաղթելու համար դեպի կոմունիզմ տանող այս ճանապարհին:

Այս ամենը հասարակորությունն է տալիս այն հետեւությունն անելու, վոր բավական չեն, հենվելով համաշխարհային գիտության բոլոր հետեւությունների վրա, թափանցել հասարակական կյանքի որենքների բնույթի մեջ, բավական չեն միայն գիտենալ, թե ի՞նչ պես կընթանա հասարակական դասակարգերի պայքարը պատմական դարձացման մոտակա տարիներում: Խնդիրը՝ ժողովրդի, հեղափոխական դասակարգի դործունեյությունը կազմակերպելու, այդ դործունեյությունը կուսակցության նշան վերջնական նպատակի իրադրժման համար մղվող պայքարի ուղիով տանելու մեջն ե: Բոլեկիների կուսակցության պատմությունն այն բանի ցայտուն վկայությունն ե, վոր այդ գիծն ել ներհատուկ և մեր կուսակցությանը: Միայն մեր կուսակցության, բոլշևիկների կուսակցության մասին կարելի յէ համարձակորեն ասել, թե նա վո՛չ միայն գիտականորեն գիտակցում և այն, ինչ անում ե, այլ և անում և այն, ինչ գիտականորեն գիտակցում ե:

Խոսքի և գործի այդ միասնությունը, նպատակին հասնելու ձանձապարհին դործողության կազմակերպման և այդ նպատակը գիտականորեն բացահայտելու այդ միասնությունը մեր կուսակցության կյանքի և պայքարի կարեռագույն և անկապտելի առանձնահատկությունն ե:

Այստեղից պարզ է Համեկ(ր)կ ԽՎԻ համագումարում ընկեր Ստալինի այն ցուցման ամբողջ կարեռությունը և հիանալի խորությունը, վոր յուրաքանչյուր բոլեկիկ տիրապետի հասարակական կյանքի որենքների իմացությանը, վոր յուրաքանչյուր բոլեկիկ կուսակցության գիծն ընդունի վորպես իր սեփական գիծը, ընդունակ լինի հմտորեն պայքարել նրա համար և պաշտպանել այն:

Յերբ մենք, հենվելով լենինի—Ստալինի կուսակցության պատմության ու քաղաքականության փորձի վրա, ուսումնասիրում ենք մեր կուսակցության գիտական նախատեսման հարցը,

ապա հարկ է վճռականապես ընդգծել, վոր խոսքն այստեղ մարդկային հասարակության զարգացման վոչ թե մասնակի, յեղակի, պատահական, կողմնակի գծերի մասին ե: Խոսքն ամենից առաջ պատմական զարգացման գլխավոր գիծը, ուղղությունը, պատմության ընթացքը նախատեսելու մասին ե: Մարդկային հասարակության զարգացման այս ընդհանուր ուղղության մեջ կուսակցությունը տարբերում է պատմական զարգացման հիմնական աստիճանները, նրա հիմնական ֆաղերը, սահմանները: Կուսակցությունը մարդկային կուտուրայի և հասարակության զարգացման տեմպերը, հիմնական պատմական ժամկետներն ընդհանուր առմամբ: Կուսակցությունը վորոշում է մարդկային հասարակության հիմնական շարժիչ ուժերը՝ նրա զարգացման տարբեր աստիճաններում:

Հենց այն պատճառնվ, վոր բոլշևիկների կուսակցության համար պատմության մատերիալիստական ըմբռնման չնորհիլ պարզ է հասարակության պատմական զարգացման ընդհանուր գիծը, մեր կուսակցությունը վստահութեն բացահայտում է նաև առանձին, մասնակի գեղքերի և պայքարի ստաղիանների բնույթը:

Ի՞նչ պիտի նկատի ունենա մարքսիստ-լենինյանը, յերբ նա չենիկով մարդկային հասարակության փաստական զարգացման մանրակրկիտ, բաղմակողմանի ուսումնասիրման վրա, ձգտում է բացահայտել պատմական զարգացման գլխավոր վճռական գիծը, նրա ուղղությունը, ընթացքը, նրա աստիճանները, ֆաղերը, տեմպերը, պատմական ժամկետները և մարդկային պատմության շարժիչ ուժերը:

Գիտական ի՞նչ տվյալների վրա յէ հենվում մեր կուսակցությունը մարդկային հասարակության անցյալ զարգացման բնույթը և առաջիկա պայքարի հիմնական ուղղությունը, տենդենցը ձիւտ գնահատելիս:

Լենինի—Ստալինի կուսակցությունը հասարակական կյանքի որենքների իր անալիզում, իր քաղաքականությունը մշակելիս յենում և պատմական մատերիալիզմի այն հիմնական գրութից, վորի համաձայն հասարակական ամբողջ շնորի ուեալ հիմքը պատմության բոլոր ժամանակաշրջաններում հանդիսացել ու հանդիսանում է մարդկանց այն հարաբերությունների համակցությունը, վորոնք կազմակորում են հասարակական արտադրողական ուժերի զարգացման վորոշ մակարդակի վրա: Այս հարցին վե-

բարերող հիմնական պատմական փաստերի անալիզը պերճախոս կերպով համոզում է, վոր մարդկային հասարակությունն ընդհանուր առմամբ առաջազեմ, վերընթաց, պրոգրեսիվ գծով է զարգանում:

Պատմության մարքսիստական-լենինյան ըմբռնումը բացահայտում է մարդկային ամբողջ կուլտուրայի և հասարակական կյանքի առաջընթաց, պրոգրեսիվ շարժումը, դիտականորեն ցույց է տալիս, վոր հասարակության պատմության մեջ միշտ մերջին հաշվով պրոգրեսիվը հաղթել է ուսակցիոնին, նորը՝ հին: Հաղթանակել է այն հասարակական դասակարգը, վորին պատկանում է ապագան: Այսպես եր ֆեոդալների հաղթանակը ստրկատերերի նկատմամբ: Այսպես եր բուրժուազիայի հաղթանակը ֆեոդալների նկատմամբ: Այսպես եր ԽՍՀՄ աշխատավորների հաղթանակը բուրժուազիայի նկատմամբ: Ահա չենց այդ է ամենից առաջ հաշվի առնում բոլշևիկյան կուսակցությունը, յերբ դնում է պատմական դարձացման ուղղությունն ու բնույթը նախատեսելու հարցը:

Մարքսիզմը, ջախջախելով պատմության իդեալիստական ըմբռնման բոլոր տեսակները, հասարակական դարձացման հիմնական չարժիչ ուժ, իսկական պատմություն սանդող է ճանաչում այն մարդկանց, վորոնք մասնակցում են արտագրության մեջ, նյութական բարիքների սանդման մեջ: Մարքսիզմը մարդկային հասարակության պատմությունը դիտում է վորպես ժողովուրդների պատմություն: Այդ առանձնապես կարեոր և նկատի ունենալ, վորովհետեւ հասարակության ամբողջ պատմությունը վկայում է նաև այն մտնի, վոր մարդկանց կյանքը հասարակական մեկ ձևից մյուսին անցնելու հետ աշխատավորների միջև ավելի ու ավելի զգալի, բազմակողմանի և խորը կապ է հաստատվում: Մարքսիստական պատմական գիտության այս դրայթը բոլում է պատմական դարձացման ամբողջ փորձից: Ուստի հասկանալի յեւ, թե վորքան հիմնավորված է, վորքան ճշգրիտ և մեր կուսակցության այն հետեւությունը, վոր անխուսափելիորեն կհաղթի այն հասարակակարգը, վորտեղ նյութատիւն բարիքներ արտադրող մարդկանց, այլ և կուլտուրայի ու գիտության բնագավառում աշխատող մարդկանց հասարակական կապը դառնում է ավելի սերտ, խորը բազմակողմանի, վորտեղ հասարակությունը բարոյական-քաղաքական միասնության է համում, վորտեղ ի մի յեն ձուլվում է ամբողջություն կազմում ժողովուրդն ու կո-

մունկալից: Այստեղից պարզ է, թե ինչու հասարակական կյանքի հետեւողական-մատերիալիստական բացատրությունը կուսակցությանը հնարավորություն է տալիս, վոր մեն-միայն նա՛ ձիւտ կողմնորոշվի մարդկային պատմության ընթացքի, նրա ուղղության մեջ:

Յեթե մարդկային հասարակության պատմությունն ամենից առաջ աշխատավոր մասսաների պատմությունն է, ժողովուրդների, նրանց գործունեության և պայքարի պատմությունն է, ապա այս պայքարի բովանդակությունը, սկսած այն ժամանակավայրից, յերբ հասարակությունը հակադիր դասակարգերի պառակտվեց, —աշխատավորների՝ շահագործումը վոչնչացնելու ձգտումն է: Մարքսիզմ-լենինիզմը հասարակության գարգացման որենքների իր ուսմունքի մեջ յելնում է այն բանից, վոր մարդկային հասարակության ամբողջ պատմությունը տանում է դեպի մտրդու ձեռքով մարդու շահագործման վոչնչացումը, վոր հասարակական կյանքի մեկ սատիճանից մյուսին անցնելիս աշխատավորներն ավելի ու ավելի շատ հնարավորություններ են սաեղծում շահագործողների վեմ պայքարելու համար, մինչեւ վոր, վերջապես, սոցիալիզմը վերջնականապես կվոչնչացնի մարդու ձեռքով մարդու շահագործման բոլոր տեսակները:

Կուսակցությունը յելնում է այն բանից, վոր, ինչպես ցույց է տալիս պատմական ամբողջ փորձը, կհաղթի այն հասարակակարգը, վորն աշխատանքի բարձրագույն արտադրողականությունն է ապահովում: Կապիտալիզմի համեմատությամբ, սոցիալիզմի աշխատանքի այդ բարձրագույն արտադրողականության ամենացայտուն որինակը ստախանովյան շարժումն է ԽՍՀՄ-ում:

